« Երևանի Լեոյի Անվան Հ 65 Ավագ Դպրոց » ՊՈԱԿ

# ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑԻ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Առարկա- ՆԶՊ

Մասնակից- Մայոր Մանուկ Ռաշիդի Զաքարյան

Ղեկավար- Փոխգնդապետ Ա. Իսահակյան

ՈՒսումնական հաստատություն – Արարատի մարզի Նոր ՈՒղի միջնակարգ դպրոց

**Թեմա՝**

Զինղեկի համագործակցությունը աշակերտների ծնողների հետ հայրենասիրական դաստիրակության և կրթության կազմակերպման հարցում

ԵՐԵՎԱՆ – 2023

## Բովանդակություն

Ներածություն 3-5

1. Հիմնական մաս. Զինղեկի համագործակցությունը ծնողների հետ կրթության կազմակերպման հարցում 5-11

2. Հայրենասիրական դաստրիակության ընթացքում զինղեկ-ծնող համագործակցության եղանակները 12-16

3. Առաջարկություններ և եզրահանգումներ 17

4. Օգտագործված գրականության ցանկը 18

## ՆԱԽԱԲԱՆ

***«ՈՒԺՆ Է ԾՆՈՒՄ ԻՐԱՎՈՒՆՔ»***

***Գ.ՆԺԴԵՀ***

Արդի ժամանակաշրջանում երբ մեր տարածաշրջանում պատերազմի վտանգը շարունակում է մնալ արդիական և մարտական դրիքերում մշտապես ՀՀ ԶՈՒ զինծառայողների կորուստները, զինղեկ ուսուցիչների աշխատանքը նոր մոտեցումներ է պահանջում՝ ինչպես աշակերտների ուսուցման, դաստրիակության, մարտական և ֆիզիկական պատրաստության առավել բարձր արդյունքների հասնելու , նաև նրանց ծնողների հետ համատեղ աշխատանք տանելու ոչ միայն ուսուցման դժվարությունները միասին հաղթահարելու, այլ որ առավել կարևոր է ապագա զինվոր դաստիրակելու, ներառելով մինչև զինկոմիսարիատ ուղեկցելը բանակ տանելիս, ծառայության ընթացքում համատեղ այցելելը զ/ծ ծառայության վայր, հրամանտարների հետ մշտական կապի մեջ լինելով ծնողին վստահություն և օգնության ձեռք մեկնելով որպեսզի ծնողը համոզվի, որ բանակ-ընտանիք կապը շարունակական պրոցես է և այն սկսվում է հենց դպրոցից, երբ իր որդին որպես աշակերտ շարք է կանգնում առաջին անգամ, դա պետք է իրադարձություն լինի տվյալ աշակերտի համար:

Վերը ասվածի հիմնավորումը կփորձեմ կատարել ինձ հանձնարարված հետազոտական աշխատանքում ՝ բաժանելով այն երկու հիմնական բաժնի



**Հետազոտության խնդիրը:**

Զինղեկը պետք է հանդիսանա լոկոմոտիվ ՆԶՊ առարկան դասավանդելիս՝ այն առժևորելով, որպես հենասյուն հատկապես տղա աշակերտների մոտ, զուգահեռ ներգրավելով նաև աղջիկ աշակերտներին, որպես ապագա զինվորներ, ինչու՞ չէ նաև սպաներ՝ աղջիկները կարող են լինել հոգեբաններ, ՀՕՊ համակարգի օպերատորներ, դիպուկահարներ, երկրի պաշտպանության գործում նաև դպրոցում սովորելիս, հատկապես սահմանամերձ գյուղական համայնքներում, որպես պատրաստի օգնականներ իրենց ծնողների հետ համայնքի տարածքում հերթապահության իրականացնելիս, օդային հարձակման միջոցները հայտնաբերելու, անծանոթ մարդկանց հանդիպելիս տեղյակ պահել համապատասխան մարմիններին:

**Հետազոտության նպատակը.**

1. Ներկայացնել զինղեկի կողմից ՆԶՊ առարկայի մատուցման մեթոդները և եղանակները,
2. Բացահայտել ծնողների հետ կատարվող աշխատանքների կարգը,
3. Վերլուծել և ցույց տալ ուսուցմանը և հայրենասիրական դաստիրակությանը ծնողներին ներգրավվելու կարգը և մոտեցումները:

## Հիմնական մաս

1. Զինղեկի համագործակցությունը ծնողների հետ կրթության կազմակերպման հարցում



Ուսուցումը մանկավարժական գործընթաց է, որի ժամանակ աշակերտները ձեռք են բերում տեսական և գործնական անհրաժեշտ՝

**գիտելիք**

Աշակերտի հիշողության մեջ ամրացված տվյալների համակարգված ձևեր և հասկացություններ են, որոնք արտահայտվում են տարբեր կանոններում, օրենքներում, բանաձևերում: Գիտելիքի տիրապետման գործընթացը ավարտվում է դրանց գործնական կիրառությամբ:

**ունակություններ**

Ունակությունները սովորողների ձեռք բերած գիտելիքների և հմտությունների կիրառման, դրանք արագ ճիշտ և գիտակցաբար կատարելու ընդունակություններ են : Դրանց ձևավորման ընթացքում աշակերտը ուսուցչի օգնությամբ աշխատանքից անցնում է ինքնուրույն աշխատանքի:

**հմտություն**

Հմտությունը աշակերտի մեխանիկորեն կատարվող գործողություններ են, որոնք մարդու գիտակցական գործողությունների մաս են կազմում: Դրանք ազատում են աշակերտին ավելորդ ցրվածությունից տալով նարան հնարավորություն կենտրոնանալ հիմնական խնդիրների վրա:

**Ձևավորման հինական մեթոդը**

օրնակելի փորձի ցուցադրումն է զուգորդված կարճ բացատրություններով և մարզումներով՝ օրինակ շարային վարժաձևերը ընկալելուց հետո երրորդ դասաժամին

հրավիրվում են ծնողները և ուսումնական դասակը շարային քայլով և հանդիսավոր երթով անցնում է, ցույց տալով իրենց ունակությունը շարային պատրաստությունից ՝ որը տևում է երեքից-հինգ րոպե:

Աշակերտներին պետք է սովորեցնել այն ինչը անհրաժեշտ է նրանց մարտի դաշտում, որը պետք է իրականացնի զինղեկը ցուցաբերելով ՝

1. Անձնական ակտիվություն որի արդյունքում աշակերտները պարզ հասկանան իրենց խնդիրները ձեռք բերեն հստակ և կայուն գիտելիքներ, ինչպես նաև դրանք օգտագործելու կարողություն, ինքնուրույնություն և նախաձեռնություն. օրինակ Ա.Ի. դեպքում կատարել լարանով արյան հոսքի դադարեցում, տուժածին առաջին օգնության ցուցաբերում: Պարտադիր պահելով կապը ծնողների հետ,որոնք տանը դասապատրաստման պրոցեսում հետևողական լինեն, փորձելով օգնել աշակերտին առավել դյուրին պատրաստվել դասերը:
2. ՈՒսուցման դիտողականության սկզբունքի առանձնահատկությունը այն է որ տեսողական լսողական ընակալումները ներկայացվեն որպես ճանաչողության սկիզբ:

   Դիտողական ուսուցումը ենթադրում է կենդանի ընկալման և ուսուցանող խոսքի անխզելի կապ, որին պետք է պատադիր մասնակից դառնա ծնողը: Դիտողականության գլխավոր նպատակն է աշակերտների մեջ բացահայտել առաջին մեր զենքի և տեխնիկայի մարտական հնարավորությունները երկրորդ ժամանակակից մարտի ճիշտ և կոնկրետ պատկերացում ՝ հատկապես հայր ծնողները, որոնք հանդիսանում են առաջնահերթ ՄՈԲ ռեզերվ: Երրորդ հետևողական և համալիր ուսուցումը նշանակում է, որ մատուցվող նյութը շարադրվի այնպես, որ նոր գիտելիքը հենվի նախկինում սովորածի կամ ընկալվածի վրա և դառնա նրա օրգանական շարունակությունը, իսկ նախկինում սովորած վարաձևերը և գործողությունները նախապատրաստեն հաջորդ գործողությունների յուրացման, օրինակ զենքի քանդման և հավաքման մասնակից դարձնելով երկու կամ երեք ծնողի:

Դիտողական միջոցները լինում են՝ բնական -զենքի և տեխնիկայի ցուցադրում ցուցադրական-նկարներ սխեմաներ պատմողական-դեպքերի և փաստերի նկարագրում:

Հանրակրթական դպրոցներում հիմնական և ավագ ուսուցումը պահանջում է, որպեսզի սովորողները լիովին տիրապետեն անհրաժեշտ գիտելիքների, հմտությունների և ունակությունների մտավոր և ֆիզիկական ուժերի մեծ լարվածության պայմաններում: Բայց չպետք է մոռանալ որ բացի ՆԶՊ առարկայից կան նաև այլ առարկաներ, և աշակերտների մեծ մասը արդեն 10րդ դասարանից սկսած պարապում են և ՆԶՊ առարկան մղվում է ետին պլան քանի որ ժամանակ առումով շատ դժվար է լինում անհրաժեշտ խորությամբ ուսումնասրիել հանձնարարված նյութը և այդ ժամանակ նորից երևան է գալիս




կապի կարևորությունը, որպեսզի տանը դասապատրաստման պրոցեսում աչքատթող չարվի դասապրոցեսը, առավել ևս որ այն շաբաթական մեկ դասժամ է օրինակ որպես օրգանական կապ ապահովվի առարկաների միջև ֆիզիկա, մաթմաթիկա, երկրաչափություն, կարող է ծնողը նշել շրջանագծի մակերեսը հաշվելու բանաձևը $S=pr^2$, կամ հեռավորության որոշման բանաձևը Հ=Բ*1000/Ա, կամ նույն մագնիսական ազիմուտը, դիրեկցիոն անկյունը, խոտորման անկյուն, Ադրիանովի կողմնացույցը:

Այս ամենին կարելի է հասնել միայն ծնողների հետ սերտ համագործակցելով:

Հարց է առաջանում իսկ եթե դպրոցը գյուղական համայնքում չէ և աշակերտների թիվ էլ մեծ է, զինղեկը պետք է ծնողական ժողովների ժամանակ երբ ծնողների մեծ մասը ներկա է գտնվում, կոնտակտային տվյալները վերցնելով կազմի գրաֆիկ (իհարկէ իր համար) և իրականացնի այդ կապը, սա լարացուցիչ ծանրաբեռնվածություն է կոնկրետ զինղեկի համար սակայն դա ևս մեկ խթան կհանդիսանա որպեսզի աշակերտը զգալով ծնող – զինղեկ – ընտանիք – դպրոց - ընտանիք կապը փոխեն իրենց վերաբերունքը ՆԶՊ առարկայի նկատմամբ և այս դեպքում հնարավոր է նաև դիմորդների որոշակի ներհոսք ռազմական կրթական

հաստատություններ:

Քանի որ ապագա զինվորի կայացումը սկսվում է մանկապարտեզ-դպրոց




Եվ աշակերտների մեծ մասը տեսնելով, կայանալով ,դառնալով ծնողներ իրենք են հանդիպում դպրոցում շարունակվող ավանդութներին և զինղեկի հետ փոխգործակցությունը ընդունում են որպես առաջնահերթություն:

Ուսուման գործընթացը գիտելքներ հաղորդելուց բացի պետք է պահպանվի հետևյան կանոնները. գիտելիքների շարադրում՝ ընդանալով հայտնիից դեպի անհայտը, պարզից-բարդը, հեշտից-դժվարը, չիմանալուց-իմանալը ուղիով: Այս կանոնի պահպանման դեպքում, ուսուցման գործընթացի սկզբում պետք է մատուցել ավելի հեշտ, պարզ թեմաները, առարկաները և հետո դրանց վրա կառուցել ավելի դժվարը, բարդը:

Հմտությունները, կարողությունները պետք է ձևավորվեն նշված կանոնին համապատասխան. սկզբում անհրաժեշտ է սովորեցնել պարզ, հեշտ գործողությունները, վարժությունները, և հնարքները, հետո աստիճանաբար բարդացնլ դրանք ուսուցման մատչելիության սկզբուքը պահանջում է որ աշակերտին մատուցվող նյութը իր բարդությոմբ հասանելի լինի նրա գիտակցությանը մտավոր կարողություններին հակառակ դեպքում դա բացասաբար է ազդելու աշակերտների ընկալունակության, ակտիվության և գիտակցական մակարդակի վրա: Աշակերտների ուսուցման պրոցեսում զիղեկը պետք է մեծ ուշադրություն դարձնի զննականության սկզբունքին: Մարդու ընկալած ինֆորմացիայի 60 ից 70 տոկոսը ձեռք է բերվում տեսողական զգայարանի միջոցով: Սա նշանակում է որ աշակերտներին մատուցվող ուսումնական նյութը պետք է պարտադիր հասանելի դարձնել նրանց լսողական տեսողական զգայարաններին :

Զննական սկզբունքը շատ կարևոր է աշակերտ-զինվոր ուսուցման պայմաններում քանի որ զամամանկավարժական գործընթացի առաձնահտկություններից մեկը այն է, որ աշակերտ զինվոր ուսուցումը իրականացվում է ռազմանական տեխնիկային և զենքին նրանց առնչվելու պայմաններում: ԵՎ դրանով ենթադրվում է զինղեկի կողմից ոչ միայն ուսումնական պրոցեսի տեսական բացատրությունը, այլ նաև զենքի, ռազմական տեխնիկայի գծագրերի սխեմաների, շեֆ-զորամասում նաև վարժասարքերի անմիջական ցուցադրումը և կիրառումը: Զննակնության երեք հինական տեսակի մասին մենք գրել ենք:

| | | |
|---|---|---|
| **Էվրիստիկ (որոնաողական մեթոդ)** .<br>այս դեպքում գիտելքները հաղորդվում են ոչ թե զինղեկի կողմից պատրաստի վիճակում այլ հայթայթում են աշակերտները ինքնուրույն ձևով համցանցից, ուսումնական գրականությունից: զինղեկը այս դետքում կազմակերպում է ոչ թե գիտելիքների հստակ հաղորդումը այլ օգնում է աշակերտներին գտնել նոր գիտելիքներ աշակերտները զինղեկի ղեկավարությամբ ինքնուրույն դատողություններ են անում, ստեղծում են պրոբլեմային իրավիճակներ(ջոկը մնացել է շրջապատման մեջ հրամանատարը զոհվել է զինվորը մոլորվել է տեղանքում) և փորձում են դուրս գալ իրավիճակից՝ ինչպես, ինչի արդյունքում էլ ձևավորվում է աշակերտների խոր և հաստատուն գիտելիքները | **Հետազոտական մեթոդը.**<br>Այս դեպքում զինղեկը սահմանափակվում է միայն դասը կառավարելով՝ և աշակետները ինքնուրույն են ձեռք բերում գիտելիքներ հետազոտություն կատարելով, ԱԹՍ օդ բարձրացնելով և տարածքը հետախուզելով ստացված տվյալները հաղորդելով հաղորդելով ստացման կետ այսինքն զինղեկին, ջոկը բացազատելով մարտակարգի կրակի կառավարման իրականացումը, ինքնուրույն կրակ հրաման արձակելը որից հետո ղեկավարման կետ զեկուցելը, մարտի դաշտից վիրավորներին առաջին օգնության ցուցադրումը և նրանց տարհանումը ձեռքի տակ եղած միջոցներով: Նշված դեպքերում աշակերտները իրենք են դառնում հրամանատարներ հրաման տալիս և զեկուցում ավագ պետին տվյալ դեպքում զինղեկին | **Ինտերակտիվ մեթոդը.**<br>այս դեպքում ենթադրելի է ուսումնական գործընթացում զինղեկի և աշակերտների ակտիվ համագործակցությունն է որի գլխավոր նպատակը աշակերտների ակտիվության մակարդակի բարձրացումն է: Ինտերակտիվ մեթոդին են վերաբերում վարժությունները (արգելագոտու հաղթահարումը), մրցույթները(հրաձգության մրձույթը բարձր դասարանցիների միջև, զենքի քանդում հավաքումը աղջիկ տղա աշակերտների միջև),բանավեճերը(բանակի եվրոպական թե ասիական զարգացման մոդելը ընտրել ): |

## Երկրորդ մաս: Հայրենասիրական դաստիրակության ընթացքում զինղեկ-ծնող համագործակցության եղանակները

***Այո՛ հայրենիքը ընդանուր աստվածություն է***

***հայրենասիրությունը՝ կրօն***

***Նժդեհ***

Ռազմահայրենասիրական դաստիրակությունը ի տարբերություն ուսումնակրթական պրոցեսի ունի մի քանի ուղղություն

| | | |
|---|---|---|
| աշակերտների դաստիարակությունը հայ ժողովրդի հերոսական անցյալի և հայկական ռազմարվեստի ոգով և ավանդութներով | այնպիսի միջոցառումների իրականացում որում ներգրաված լինեն և ծնողները և աշակերտները, որի շնորհիվ նրանք ընկալեն զինղեկ-ծնող փողգործակցության անհրաժեշտությունը ներկա բարդ ռազմա-քաղաքական իրավիճակում՝ ներառյալ պետական սահմանը անառիկ պահելու անհրաժեշտությունը: | հայրեասիրության առաջնահերթ օբյեկտ է հանդիսանում անհատը, ում գերակա սոցյալ բարոյական խնդիրն է իր հայրենիքի պատմամշակութային ազգային հոգևոր գիտակցումը: |

Հայրենասիրություն դաստիրակելը պահանջում է հետևողական համբերատար աշխատանք: Այն չի ձևավորվում միանգամից այլ ունի խոր ակունքներ գալիս է մեր նախնիներից և սկիզբ է առնում ամենից առաջ որտե՞ղ – ընտանիքում - բակում , ընկերական և հասարակական հարաբերություններում ձեռք են բերում կայուն որակ և դառնում անձի, քաղաքացու անբաժանելի մաս և բնավորության գիծ:

Սովորաբար աշակերտը դեռահասության և պատանեկան տարիքում իր արարքներում հաճախ է հիմնվում հասարակական կարծիքի և բարոյական

պատկերացումների վրա, յուրացնում դրանք փորձում է ինքնուրույն կարգավորել և վերահսկել իր արարքները, գործողությունները, առաջնորդվելով սեփական բարյական նորմերով, առժեքներով սեփական արժանապատվության և խղճի թելադրանքով:

Օրինակ 44 օրյա պատերազմի և դրան հաջորդող մարտական գործողությունները մեր ժողովրդից խլեցին ավելի քան 6000 երիտասարդ կյանք, որոնց հուղարկավորությունները կատարվում էր բակերում, որտեղ անցել էլ նրանց մանկությունը պատանեկությունը , որտեղից նրանք բանակ էին ճանապարհվել: Մոտ 10000 զինհաշմանդամներ, որից 10-ից 15 տոկոսը կորցրել են իրենց վերին կամ ստորին վերջույթները, շատերը տեղաշարժվում են անվասայլակով և այդ ամենը տեսնում են աշակերտները և նրանց ծնողները,նաև դպրոցների փառքի անկյունները, և այդ տղաները մեկ,երկու , կամ երեք տարի հետո պետք է համալրեն և համալրում են մեր զինված ուժերը: Սա նշանակում է, որ զինղեկը ծնողների հետ այնպես տանի աշխատանքը, որպեսզի նրանք տեսնեն հավատ վտահություն նրա գործողություններում որը իրենց զավակներին նույն կրթական օջախում կարողանում է պատրաստի նորակոչիկ ճանապարհել վերջին զանգից հետո: Որպես գործիքակազմ այդ ճանապարհին մեծ նշանակություն ունեն «Կորյուն» ռազմամարզական խաղերը որոնք անց են կացվում մի քանի փուլով հրաձության մրցումները, հրշեջ փրկարար մրցումները, որտեղ ներգրավված են լինում ինչպես տղա այնպես էլ աղջիկ աշակերտները: Ընտրություն կատարելուց հետո պարտադիր պետք է տեղյակ պահվի ծնողներին որ նրանց զավակները ընգրկված են այդօրինակլ վարժանքներում: Ընտանիքում տվյալ այդ աշակերտին պետք է խրախուսել քաջալերել: Եվս մեկ կարևոր հանգամանք դպրոց բանակ ընտանիք



Վաղվա զինվորը կրթվում դաստիրակվում է մանկապարտեզում-դպրոցում, ահա թե որտեղից է սկսվում բանակը, իսկ որտեղից է աշակերտը, երիտասարդը գնում մանկապարտեզ դպրոց, այո՛ ընտանիքից : Միջոցառումների ժամանակ և սաները և աշակերտները հաճույքով են հագնում զինվորական համազգեստը, շատ դեպքերում ծնողները իրենք են ձեռք բերում համազգեստները ռազմահայրենասիրական միջոցառումների համար:

Շատ կարևոր է զինղեկ ծնող համագործակցությունը հայոց լեզվի և պատմության ուսուցիչների հետ, առավել հիշարժան դարձնելով պատմության կարևորագույն իրադարձությունները, մեր ազգի հերոսների գործունեությունը, կազմակերպելով այցելություն պատմական հիշատժան վայրեր օրինակ Խոր Վիրապ, Ամբերդ ամրոց, Սարդարապատ հուշահամալիր, Գևորգ Չաուշի արձանը Խոր Վիրապի մոտ, Անդրանիկի, Մոնթեի կամ մեր նորօրյա հերոսների Եռաբլուր զինվորական պանթեոն: Այցելությունները չպետք է լինեն հոգնեցուցիչ, այլ ճանաչողական , բովանդակալից, ներգրավված լինեն զինղեկը, ծնողներ, պատմության , կամ լեզվի ուսուցիչներ:

Ցանկալի է որ առաջին ճանաչողական այցը լինի հենց այն մարզում որտեղ որ աշակերտները ապրում և սովորում են՝ Արարատում Սպաարապետ Վ. Սարգասյանի տուն-թանգարան, Փառքի Արահետ, Արմավիրում ՝ Սարդարապատի Հուշահամալիր: Սա անհրաժեշտ է որպեսզի աշակերտները իմանան որ իրենց կողքին ովքեր են ապրել և խրամատում մարտ վարելիս իրենց մոտ հարց չառաջանա դիրքը թողնել թե չթողնել՝ նույնիսկ եթե մենակ է մանացել մյուսները զոհվել են:

Միայն զինղեկը չի կարող հասկանալ աշակերտին, նրա զգացմունքները հուզերը , պարտադիր պետք է կապի մեջ լինի ծնողների հետ:

Այց զորամաս: Պարտադիր պետք է ներգրավված լինեն ծնողներ , որոնք կտեսնեն նորովի և բուժկետը, և ճաշարանը, շարահրապարակը, կվերհիշեն ինչ որ նոր բան կառաջարկեն: Զինվորի կենցաղը ուսումը և աշխատանքը ռազմականացված են: Օրեցօր բարդացվող զենքի և ռազմական տեխնիկայի յուրացման համար պահանջվում է ոչ միայն ուժերի գերլարում այլ ուսուցման և դաստիրակության մեթոդների և ձևերի վերանայում: Հրթիռային և զրահատեխնիկայի կատարելագործումը առաջի պլան է մաղում իմացական ունակությունները: Այսպես 120 մմ հրանոթի մեկ կրակոցը ապահովվելու համար պահանջվում է 10-12 գործողություն իսկ Իսկանդեր հրթիռային

համակարգի կրակողը ապահովելու համար անհրաժեշտ է 150 գործողություն: Բնական է որ  այս դեպքում զինվորից պահանջվում է ոչ միայն արագություն այլ իմացական լուրջ կարողություն: Ռազմամանկավարժական գործընթացը ունի  երկու փուլ անհատական պատրաստություն և ստորաբաժանումների պատրաստություն: Ըստ լուծվող խնդիրների՝ բաժանվում է ձմեռային փուլ,ամառային փուլ:

Ռազմամանկավարժական գործընթացի առաձնահատկությունը այն է որ ռազմական աշխատանքի իմացությունը, վարպետության հասնելը, յուրաքանչյուր զինծառայողի պարտականությունն է և հրաժարումը կանոնադրական պարտականություններից նշանակում է հրաժարում զինվորական պարտքից : ՈՒսումնադաստիրակչական գործընթացը զորամասում կրում է համակենտրոնացված բնույթ, որը պետք է բացատրվի աշակերտներին ու ծնողներին իսկ դա կատարվում է նրա համար որ զինվորը չկորցնի հետաքրքրությունը պարապմունքերի նկատմամաբ: Պետք է ծանոթացնեն աշակերտներին զինվորական մասնագիտությունների հետ որոնք նախկինում եթե 160 էին ապա այժմ ռազմատեխնիկական մասնագիտությունների թիվը հատել է 1000 սահմանը:

Սա նշանակում է, որ ռազմական տեխնիկայի բարձր հուսալիության կարելի է հասնելլ միայն այն դեպքում երբ զինծառայողը կատարելապես տիրապետում է իր մասնայգիտությանը: Հենց զորամասում զինղեկը պետք է սպաների հետ աշակերտներին և ծնողներին պետք է  բացատրի որ ուսուցումը և դաստիրակումը կազմակերպվում է որոշակի ժամանակով՝ ժամկետայինը-2 տարի պայմանագրայինը 3-5 տարի, սպաներինը 15-20 տարի :

Կարճաժամկետությունը ռազմամանկավարժական գործընթացին հաղորդում է արագացում: Եթե 12 ամսվա ընթացքում զինծառայողը սովորում է մասնագիտություն, քաղաքացիական կյանքում 12 ամսվա ընթացքում սովորում են տառերը գրել և կարդալ՝ սա որպես համեմատություն: Զորամասում հայրենասիրական ռազմահայրենասիրական դաստիրակության կարևոր օբյեկտ է համարվում նոր զորակոչված զինծառայողների երդման արարողությանը աշակերտների և ծնողների մասնակցությունը: Որը որոշակի հուզական պահ է առաջացնում և զինծառայողների և ծնողների մոտ, քանի որ տարբեր ընտանիքներից և սոցյալական շերտերից զորակոչված զինծառայողները ունենում են մեկ ընդանուր նպատակ՝ դա հայրենիքի պաշտպանությունն է: Որի համար անհրաժեշտ

է գիտելիքներ , կարողություններ, հմտություններ և բարոյամարտական որակներ: Անցած ուսումնական տարվա ընթացքում իմ կողմից զորամաս այցելության ընթացքում գործող սպաների հետ համատեղ իրականացրել ենք աշակերտների և զինվորների միջև

1. Զենքի քանդման-հավաքման մրցույթ

2.ՈՒսումնական նռնակների նետում

3.Ջոկերի կազմով երթակարգի, նախամարտակարգի, և մարտակարգի ստեղծում

4.ԱԹՍ-ներից տագնապով բացազատում որը մեծ ոգևորություն առաջացրեց ինչպես մասնակիցների այնպես էլ ներկաների շրջանում:

Սա ցույց է տալիս որ ռազմահայրենասիրական դաստիրակության մեկ դրվագը- ինչպես է վերածվում ուսուցման գործընթացի- հմտությունները և կարողությունները ցուցադրելուն ինչպես նաև ունի դատիարակող և զարգացնող գործառույթ որը զարգացնում է նաև զինվորների և աշակերտների բարոյամարտական որակները :

Ժամանակակից մարտին նախապատրաստվելիս պարտադիր պայման է ուսուցման գործընթացի կատարելագործումը և պարապմունքերի գիտական մակարդակի բարձրացումը:

Զորամաս այցելելիս որպես հայրենասիրական դասընթացի օրինակ կարող է ծառայել այցը փառքի անկյուններ, զորամասի թանգարան , զորամասի պատվո դրոշի մոտ պահակ կանգնելը, զորամասի վերադաս հրամանատարության հետ շփումը, մարտական տեխնիկայի հետ ծանոթացումը (տանկեր,հմմ-ներ,հրանոթներ):

11-րդ դասարանի աշակերտներին զորային հրաձգարան ուղղեկցելիս որտեղ աշակերտները պետք է իրականացնեն մատական հրաձգություն 6 մարտական փամփուշտով: Պարտադիր ներգրավվում են երկուսից երեք հայր ծնող, որպեսզի իրենք ևս մասնակից դառնան ՝ իհարկե անվտանգ տարածությունից, որը ևս հայրենասիրական դաստիրակության լրացուցիչ խթան է հանդիսանում: Այստեղ ևս տեղի է ունենում զորամասի սպաների, պայմանագրային զինծառայողների աշակերտների, նրանց ծնողների հանդիպում մտքերի փոխանակում, փոքրիկ նվերների հանձնում զինծառայողներին: Մինչև մարտական հրաձգության սկսելը իրականացնում ենք պարապմունքներ ռազմական տեղագրությունից օրինակ ազիմուտ 25 աստիճան հյուսիս, առաջին բուժօգնություն օրինակ հրազենային թափանցող վերքի վիրակապում կրծքավանդակի ձախ հատվածում, ինժիներական պատրաստությունից խրամատի

փորում ծնկած դիրքից: Թեև պարապմունքները անցնում են իմ ղեկավարությամբ սակայն զորամասի սպաները և պայմանագրայիները  ևս իրենց մասնակցությունն են բերում այդ գործընթացին:

## Առաջարկություններ և եզրահանգումներ

1. Մարտավարության, կրակային պատրաստության թեմաները ուսումնասիրելիս ներգրավվել ծնողների որոշակի տոկոս
2. Ռազմամարզական վարժանքներում լավագույն արդյունքներ ցուցաբերած աշակերտների պարգևատրումը իրականացնել համայքապետի և ծնողների պարտադիր մասնակցությամբ
3. ԱԹՍ-ների հետ վարժանքներ իրականացնելիս ներգրավվել ծնողների
4. Զինղեկը պետք է նպաստի կարգապահության և պահնջկոտության բարձրացմանը դպրոցում ընտանիք-դպրոց-բանակ կապի ամրապնդմանը
5. Ճիշտ կատարի ժամանակի բաշխումը դասի պլանը կատարելիս, հնարավորիս շատ ինֆորմացիա տա բանակում օգտագործվող սպառազինության վերաբերյալ, ԱԹՍներից պաշտպանվելու եղանակների վրա :

## Օգտագործված գրականության ցանկը


1. Մոտոհրաձքային զորքերի  սերժանտի դասագիրք  1996թ.
2. Գաղափարադաստիրակչական դաստիրակություն և ՀՊՊ ձեռնարկ 2010թ.
3. «Հայ Զինվոր» պաշտոնաթերթ 2023թ.
4. «Կրթություն» շաբաթաթերթ 2023թ.